

Հ Ա Յ Կ Ո Ւ Ն Ա

(Դալմասական լեզենդա)

Ընկա՛ւ Րադօյցան, ընկա՛ւ հայդուկը.
Ընկա՛ւ վերջապէս Դալմասիոյ ոգին.
Բայց դիակն անգամ, փաշի դիակը՝
Դեռ սարսեցնում է թուլասիւրս սանկին:

Նրանք մտածում են.— Դալմասիոյ հսկան
Գուցէ լոկ վէ՛րբ է ստացել կրծքից.
Գուցէ կեղծո՞ւմ է, որ յետոյ արեան
Վըրէժը լուծէ թեմամի սանկից:

Մահն ստուգեցէ՛ք, վառեցէ՛ք կրծքին—
Բա՛ց արէ՛ք կուրծքը, խարոյկ վառեցէ՛ք,
Կրակի ցաւերը կը փայլեն դէմքին,
Եթէ մեռած չէ դեռ մեր թեմամին:

Եւ ահա՛ կարմիր բոցը կըրակի
Թանձր ծրխի հետ վեր է բարձրանում,
Հուրը խանձում է լանջը հայդուկի,
Բայց նա մեռած է. տեղից չէ շարժում...:

—Բերէ՛ք ժանսադէմ մի օձ բունալից,
Տափաքէ՛ք նըրան, ու փաթթէ՛ք վըզին.
Եւ նա կը շարժուի օձի հրպումից,
Եթէ մեռած չէ դեռ մեր թեմամին:

Եւ սարսափելի օձը տափաքած՝
Նրա շլնքին ծալում, գալարում.
Սակայն հայդուկի դէմքին դալկացած՝
Կեանքի մի նըւոյլ դեռ չէ երեւում:

Ու հրնարագէտ ահա՛ մի սանիկ
Առաջ է անցնում, ժրպիտ երթունքին.
«Ջարայումը կայ մի չմնաղ աղջիկ,
Կանչեցէ՛ք նրան. դիակի կողքին
Թո՛ղ նա իւր ազգի երգէ վերքերից,
Եւ եթէ ողջ է դեռ եւս Րադօյցան,
Անեուտ եր շարժուի աղջկայ երգերից»:

Ահա՛ դիակի կանգնել է կողքին
Գուսրը Ջարայի, չմնաղ Հայկունան,
Եւ աչքը յառել սոսկալի վերքին,
Որից ընկել է քաջըն Րադօյցան:
Թախծի փոխարէն բոցեր են ցայտում
Հրպարտ աչքերից, այրում թեւամուն.
Դիզում է անգուսպ յուզմունքը սրտում...
Ի՛նչպէս, Րադօյցան թեւամու ձեռնում...:
Եւ Հայկունայի երթունքներ կապած՝
Յետ-յետ են գրնում մեծաքի նրման,
Եւ նրա կրծքից բղխում են յանկարծ՝
Ազգային երգի ձայներն աննրման:
Եւ բաղխումների տակ երգին կրֆոս,
Սկսում է պարել սիրուն Հայկունան,
Քաջ Րադօյցայի վերքն է արիւնոտ
Գովում իւր երգով, գովում բարձրաձայն:
Եւ ահա՛ կրակոտ երգի ձայներից
Հայդուկը կամաց աչքերն է բանում...
Անգուսպ բերկրութեան մի նիչ բոցելից՝
Ամբողջ դաւաճըն է շարժում թնդացնում:
Ծովի ակեաց պէս շարքերը սանկաց
Դէպի առաջ են նետում սասկազգին,
Սակայն Հայկունան թեւամու դիմաց
Արդէն գրկել է սիրած հայդուկին,
Եւ իւր կենսասու երգի ձայներով՝
Նրբան նոր կեանք է տալիս վերսին: